ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Ալավերդի համայնքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ հոգեբանի / 0.5 հաստիքային միավոր/ թափուր հաստիքի համար:

Մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով ունի բարձրագույն մասնագիտական կրթություն կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և հատուկ դասընթացի միջոցով (այսուհետև՝ մոդուլ) ձեռք բերած նախադպրոցական մանկավարժության հոգեբանության և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առվազն 20 կրեդիտ:

Մրցույթի համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում (Ձև 1)՝ լրացվում է տեղում ,

2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),

3) անձը հաստատող փաստաթուղթ,

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում),

5) ինքնակենսագրություն (Ձև 4),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթն անց է կացվելու 2026 թվականի հոկտեմբերի 6-ին, ժամը 14:00-ին, ք. Ալավերդի, Սանահին կայարան 19/1 հասցեում:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել անձամբ՝ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են 2026 թվականի սեպտեմբերի 4-ից մինչև հոկտեմբերի 2-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:00-17:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները կարող են հայտարարությանը հետևել https://www.alaverdi.am/, https://www.lori.matd.am/ կայքերում և «Ալավերդու թիվ 3 մանկապարտեզի» ֆեյսբուքյան էջում:

Մրցույթն անց է կացվելու երկու փուլով՝ գրավոր և բանավոր:

Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝ https://escs.am/am/news/11978

Տեղեկությունների համար կարող եք զանգահարել +374 96 21 25 72 հեռախոսահամարով: